

## 5.2. Իրավախախտումներ

**5.2.1. Հանցագործություններ:** Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության տեղեկատվական կենտրոնի ներկայացրած տվյալների, հանրապետությունում 2000թ. հունվար–փետրվարին գրանցվել է 1545 հանցագործության դեպք կամ 18.9 %-ով ավել, քան 1999թ. նույն ժամանակահատվածում: Ընդ որում, գրանցված հանցագործությունների 55.9%-ը՝ քրեական հետախուզության գծով, 5.9 %-ը՝ տնտեսական ոլորտում կատարված և 38.2%-ը՝ այլ բնույթի հանցագործություններ են:

Քրեական հետախուզության գծով գրանցված ծանր հանցագործության դեպքերի 14.7%-ը ծանր նարմնական վնասվածքներ են, որոնք նախորդ տարվա հունվար–փետրվարի համեմատ ավելացել են 25.0%-ով: Նույն ժամանակահատվածի համեմատ դիտավորյալ սպանության դեպքերն ավելացել են 37.5%-ով, իսկ սպանության փորձի դեպքերը նվազել են 50.0% – ու:

1999թ. հունվար–փետրվարին գրանցված հանցագործությունների կազմում 29.6% կազմած անձնական գույքի հափշտակության դեպքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 16.9%-ով, ընդ որում անձնական գույքի հափշտակության իրականացումը գողությամբ՝ 26.8%-ով, կողոպուտի միջոցով՝ 5.6%-ով, իսկ ավազակության և խարդախության միջոցով նվազել են համապատասխանաբար՝ 43.8 և 9.1 տոկոսային կետերով: Բնակարանային գողությունները, որոնք անձնական գույքի գողությունների մեջ կազմել են 26.0%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 2.0 %-ով:

1999թ. հունվար–փետրվարի համեմատ արձանագրվել են պետական կամ հանրային գույքի հափշտակության դեպքերի նվազում 45.3%-ով, այդ թվում՝ գողության միջոցով՝ 41.4 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2000 թ. հունվար–փետրվարին 18.9%-ով նվազել են թմրամոլության և թմրամոլության հետ կապված հանցագործությունները և կազմել 60 դեպք: Արձանագրվել է ապօրինի կերպով զենք, զինամթերք կրելու, պահելու, պատրաստելու, ձեռք բերելու կամ վաճառելու հետ կապված հանցագործությունների 37 դեպք, որը 1999թ. հունվար–փետրվարի համեմատ ավելացել է 11-ով կամ 42.3%-ով:

1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ 30.0 %-ով ավելացել են տնտեսական ոլորտում կատարված հանցագործությունները և կազմել 91 դեպք: Յուրացնելու, վատնելու կամ պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով արձանագրված պետական գույքի հափշտակման 32 դեպքից (1999թ. հունվար–փետրվարի 16-ի դիմաց) 40.6%-ը (1999թ. հունվար–փետրվարի 56.3 %-ի դիմաց) խոշոր չափերի հասնող հափշտակություններ են:

Ըստ մարզերի, հանցագործության դեպքերի առավելագույն նվազում արձանագրվել է Կոտայքի մարզում՝ 31.9%: Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում արձանագրվել է հանցագործության դեպքերի առավելագույն աճ՝ համապատասխանաբար՝ 2.2անգամ և 54.3%-ով: